ИНСТИТУТ СОБСТВЕННОСТИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ФИЛОСОФИИ ПРАВА

Давтян Артур
Соискатель Института философии, социологии и права, НАН РА

РЕЗЮМЕ

В данной статье автор подробно анализирует содержательные особенности института собственности в мусульманском праве.

Ключевые слова. Мусульманское право, шариат, институт собственности, право собственности, права собственности, содержание собственности.

INSTITUTE OF PROPERTY FROM THE POINT OF VIEW OF PHILOSOPHY OF LAW

Artur Davtyan
applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

In this article, the author thoroughly analyzes the content features of the institution of property in Muslim law.

Keywords. Muslim law, sharia, property institution, property right, property rights, property content.

ԻՐԱՎԱԿԱՆ ՇՓՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ. ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Անահիտ Այվազյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Իրավական շփումը իրենից ներկայացնում է իրավունքի սուբյեկտների (իրավասուբյեկտությամբ օժտված ֆիզիկական և իրավաբանական անձանց) առանձնահատուկ փոխհարաբերակ-

ցության տեսակ[1]: Իրավական շփման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն տեղի է ունենում իրավունքի սուբյեկտների միջև միաժամանակ և՛ ազատության, և՛ պատասխանատվության վերաբերյալ կողմերի ընկալումների և պատկերացումների հիման վրա:

Իրավունքը, որն ընկած է իրավական շփումների միջև, իրենից ներկայացնում է սոցիալական երևույթ վարքագծի համապարտադիր մոդուլ (օրինակ), որին ենթարկվում և համապատասխանեցնում են իրենց դրսևորված վարքագիծը՝ իրավունքի սուբյեկտները:

Իրավական շփումների կենտրոնական դերակատարը՝ իրավունքի սուբյեկտն է (ֆիզիկական և իրավաբանական անձը), իր օրինական ու բանական շահերի և սպասումների ակնկալիքով:

Իրավական շփումներում սուբյեկտները կապված են իրավունքի հետ և օժտված են իրավահարաբերությամբ, իրավունակությամբ, որոշակի իրավասությամբ ու կարողություններով, որոնց շնորհիվ նրանք համադրում, շաղկապում և տարբերակում են իրենց օրինական շահերը, պահանջմունքները և սպասումները: Այս առումով, իրավունքի սուբյեկտը՝ նյութական և ոչ նյութական բարիքներ ձեռք բերելու ունակությունն է, որի շնորհիվ բավարարվում է նրա ակնկալիք պահանջմունքը:

Իրավական շփումների ոլորտում է իրացվում իրավունքի սուբյեկտի ինքնահիրացումը, իրավական ինքնությունը և իրավական ձգտումները և հենց դրանցով է պայմանավորված անձի և ողջ հասարակության երաշխավորված առաջընթաց զարգացումը:

Իրավական շփումներում է բացահայտվում իրավական մարդը (homo juridicus), որտեղ դրսևորվում է վերջինիս որակական հատկանիշները, սոցիումում նրա ձգտումները, նպատակը, գործելակերպը, վարքագիծը և այլն:

---

[1] Տե՛ս Стандарты научности и homo juridicus в свете философии права., Изд.-во Норма, М., 2011, С. 166-167.

Իրավական մարդը որպես վերացական անձ՝ իրավական շփումներում հանդես է գալիս արդեն կոնկրետ անձնավորված, ինքնավար սուբյեկտ՝ ազատ, բայց կանխատեսելի վարքագծով:

Իրավունքի սուբյեկտի ավանդական ընդունված հատկանիշերն են՝ իրավասուբյեկտությունը, իրավունակությունը, գործունակությունը և դելիկտունակությունը (պատասխանատվությունն իր դրսևորած վարքագծի համար):

Անձի ճանաչումը որպես իրավունքի սուբյեկտ, ենթադրում է նաև նրա իրավասուբյեկտության ճանաչումը, ինչը ենթադրում է, որ անձն օժտված է իրավունքներով ու ազատություններով, այսինքն՝ իրավունակությամբ: Սյս առումով, իրավասուբյեկտությունը և իրավունակությունը հավասարազոր կատեգորիաներ են[1]:

Իրավունակությունը որպես իրավասուբյեկտություն, այսինքն՝ անձին ընդունելով որպես իրավունքի սուբյեկտ, չի կարող սահմանափակվել: Անձի որոշ սուբյեկտիվ իրավունքների օրինական սահմանափակումը, չի նշանակում նրա իրավունակության սահմանափակում: Առավելևս, անձի իրավունքների և ազատությունների իրականացումը միշտ սահմանափակվում է մյուս անձանց իրավունքներով ու ազատություններով՝ ըստ իրավաբանական հավասարության սկզբունքի: Սակայն դա չի նշանակում իրավասուբյեկտության իրավունակության սահմանափակում:

Իրավունքի սուբյեկտը՝ ազատ անձն է (որն օժտված է կամքի ազատությամբ), որին հետևում է նրա իրավունակությունը՝ ունակություն իրացնելու իր ազատությունները և իրավունքները:

Իրավունքը որպես ազատության և հավասարության չափ՝ մարդուն դարձնում է իրավունքի իսկական (իրական) սուբյեկտ: Մյուս սուբյեկտները (հանրային և մասնավոր իրավաբանական անձինք)՝

---

[1] Այդպիսի կարծիքը տարածված է, իրավաբանական գրականության մեջ: Տե՛ս **Александров Н.Г.** Законность и правоотношения в советском обществе.М., 1955, с. 134, **Братусь С.Н.** Субьекты гражданского права.М., 1950, **Кечекьян С.Ф.** Правоотношения в социалистическом обществе, М., 1958; **Толстой Ю. К.,** К теории правоотношения. Л., 1959, С. 9-11; **Чечот Д.М.**, Субьективное право и формы его защиты, Л., 1968, С. 11-12.

իրենցից ներկայացնում են իրավաբանական կառույցներ (ֆիկցիաներ), որպես իրավահարաբերությունների սուբյեկտներ՝ օբյեկտիվ իրավունքի շնորհիվ, որպես իրավակարգավորումներիոլորտում դրանց՝ մասնավոր և հանրային իրավաբանական անձանց մասնակցության օպտիմալ տարբերակ:

Հետևաբար, որպես իրավական անձ կարող է հանդես գալ միայն իրավունակ և գործունակ մարդը, որն օժտված է լիակատար իրավասուբյեկտությամբ (իրավունակությամբ):

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկում իրավական շփում և իրավունքի սուբյեկտ եզրույթները, բացահայտում է դրանց բովանդակային առանձնահատկությունները և գտնում է, որ իրավունքի իսկական սուբյեկտը մարդն է, իսկ մյուսները՝ իրավաբանական անձինք՝ իրավական ֆիկցիաներ են:

Բանալի բառեր. մարդ, ֆիզիկական անձ,իրավաբանական անձ, իրավական շփում, իրավական ֆիկցիա, իրավունքի սուբյեկտ:

ПРАВАВОЕ ОБЩЕНИЕ И СУБЪЕКТ ПРАВА: О ПРОБЛЕМЕ ВЗАИМООТНОШЕНИЯ

Анаит Айвазян

Соискатель Института философии, социологии и права, НАН РА

РЕЗЮМЕ

В данной статье автор обстоятельно анализирует термины правовое общение и субъект права, раскрывает их содержательные особенности и считает, что исходным и единственным подлинным субъектом права является человек. Все иные так называемые субъекты права-юридические лица-фикции.

Ключевые слова. человек, физическое лицо, юридическое лицо, правовое общение, правовые фикции, субъект права.

LEGAL COMMUNICATION AND THE SUBJECT OF LAW: ABOUT THE PROBLEM OF RELATIONSHIP

Ayvazyan Anahit
applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

In this article, the author thoroughly analyzes the terms legal communication and the subject of law, reveals their substantive features and thinks that the original and true only subject of law is a person. All other so-called subjects of law are legal entities-fiction.

Keywords. person, natural person, legal entity, legal communication, legal fictions, subject of law.

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հայկ Շահբազյան
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Ժամանակակից իրավագետները հսկայական աշխատանք կատարեցին այնպիսի ոչ միանշանակ երևույթի ուսումնասիրության գծով, ինչպիսին է սուբյեկտիվ իրավունքը[1]: Եվ տվյալ հարցի հետազոտման ընթացքում մշակված տարատեսակ հայացքները, դիրքորոշումները, հայեցակարգերը ծառայում են որպես այն նյութը, տեսական հիմքը, որը հնարավորություն է տալիս ձևավորել ժամանակակից քննադատական պատկերացումներ սուբյեկտիվ իրավունքի մասին: «Սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի իմաստավորման փորձը՝ հաշվի առնելով ոչ միայն խորհրդային, այլև նախորդ ժամանակաշրջանի իրավագետների աշխատությունները, կարծում ենք, միայն կհարստացնի այդչափ բարդ կազմակերպված

[1] Մանրամասն տե՛ս **Хохлова Е. М.,** Субъективное право и юридическая обязанность в механизме правового регулирования: дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2008.